Արձանագրություն N 2

«ՀԱԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-14/15» ծածկագրով կայանի կարիքների համար ««Հայատոմ» ՓԲԸ ինժեներական մասնաշենքի ծեղնահարկում տեղադրված` «ՀԱԷԿ» ՓԲԸ պատկանող «Տրանկինգ **OBOИ**» կապի համակարգի մալուխի պահպանումը լարման տակ համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանների» ծառայության գնման գնահատող հանձնաժողովի նիստի:

ք.Մեծամոր — 08 հունվարի 2016թ. ժ.12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ` Օ. Գևորկյանը
Հանձնաժողովի քարտուղար` Ա. Հակոբյանը

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և «ՀԱԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-14/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սկսեց իր գործունեությունը`

1. «ՀԱԷԿ-ԲԸԱՀԾՁԲ-14/15» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին

Նախագահը հայտարարեց, որ գնումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով` «գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ» և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը` 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը:

ա. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ անձը.

| Մասնակցի անվանումը և հասցեն |
|---|
| «Հայատոմ» ՓԲԸ<br>ք.Երևան, Ծովակալ Իսակովի 50<br>հեռ. 010-74-21-30,<br>էլ.փոստ` **armatom@web.am** |
| 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ |

2. Ուսումնասիրելով ներկայացված ծրարը, դրանում գտնվող փաստաթղթերը` հանձնաժողովը եզրակացրեց, որ`

- «Հայատոմ» ՓԲԸ -ի ներկայացրած`

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,
բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում` կողմ – 1, դեմ – 0:

3. Քանի որ գնումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մասնակցի ներկայացրած գնային առաջարկը չի գերազանցում տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, հանձնաժողովը որոշեց` «Հայատոմ» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից և նրա հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում` կողմ – 1, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ` ........................ Օ. Գևորկյան

Քարտուղար` ........................ Ա. Հակոբյան